ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. [Angleterre]

*Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար։*

*Իւրաքանչիւրի եւ ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք—ահա՛ ճշմարիտ ազատութիւն։*



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

| | | |
|---|---|---|
| ՏԱՐԵԿԱՆ | 5 | Ֆր. |
| ԿԷՍ ՏԱՐԻԱՆ | 3 | „ |
| ՄԻ ՀԱՄԱՐԸ | ½ | „ |


*Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը։*

*Արեան ճանապարհ—ահա՛ ազատութեան ճանապարհը։*

*Ժողովուրդ, մի աղերսիր, այլ պահանջիր եւ ձեռք բեր։*

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՈՆԴՈՆ | Nr 5. ՍԵՊՏԵՄԲԵՐ 5. Nr | 1895 | ՄԻԱՄՍԵԱՅ

# Կ. ՊՈԼՍԻ ՄԵԾ ԵՒ ԱՐԻՒՆԱՀԵՂ ՑՈՅՑԸ.




ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀՐԱԲՈՒԽԸ ԺԱՅԹՔԵՑ.




ԱՆԳԼԻԱՆ. — ՈՒԶՈՒՄ ԷԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՔՆԱՑՆԵԼ…
ԲԱՅՑ ԱՅՍ ԱՆԻԾՎԱԾ ՀԱՅԵՐԸ ՆՈՐԻՑ ԿՐԱԿ ԳՑԵՑԻՆ ԳԼԽՍ…

կ ա ս ա ա ն է ու Հ ա յ ա ս տ ա ն է… Ես կը գրեմ, կը կարդամ կը խօսիմ, ո՛չափ որ ուզեմ: Ա. գործին սիրոյ՝ համար կը ճամբորդեմ շոգենաւով, շոգեկառքով, եթէ կուզէք՝ հեծելանիւով այ, վերջապէս ամէն բան կ'ընեմ…„

Բայց, խնդրեմ, պարոն, ընդհատեցէք ձեր գոհողութեանց և անձնուէր ծառայութեանց անսպառ շարքը. տեսնենք ուր կերթաք… Միթէ Եւրոպա, Ամերիկա և այլ՝ հայեր չը կա՞ն ո-րո՞ք առանց ձեզ պղտոր յաջողութիւն պատճառելու կարող են ընել ի՞նչ որ դուք կատարելիք. միթէ արտասահմանի մէջ բաւական ո՞չ, ինչ կըսեմ. բաւականէն շատ ուսեալ խօսողներ, գրողներ, երթեւեկողներ չը կա՞ն. միթէ չը կա՞ն արդեօք, ազատ հողի վրայ, հըռկայական մարմիններ խոշոր-խոշոր անուններով, որոնք՝ ճիշդ ձեզի պէս պէտք չեն զգար Հայաստանի մէջ գործ և գործողներ ունենալու, բայց ունին անհագին պաշար մի խօսքի, ահագին մթերք մի գրելու և լիզէան մի գումարներու, որ հայրենասիրական նոր աշխարհներ կը փնտռեն… Հայաստանէ դուրս: Բայց խօսք, Հայաստանն է որ պէտք ունի հայ գործիչներու և ոչ թէ Ամերիկա կամ Չինաստան:

ԽԱՅԹՈՑ.

---

և փոխչաներ են (մուրհակներ ու փոխանակագիրներ), որոնցից շատերը փուլ (թղթադրամ) չունեն:

Այդ վերջին պարբերութիւն ուրախութեամբ փայլեցրեց բոլոր նստողների դէմքը. ուրեմն նրանք գտել էին այն, ինչ կազմում է թիւրք պաշտօնեաների հոգին. փոխչաներ, մուրհակներ, փող… Բաշ-քեաթիբը Միւլէյմանից ստանալով այդ թանկագին ծրարն արդէն բաւկրել էր գրամի գումարը հաշվել մի կտոր թղթի վրայ երկար ժամանակ մտածելուց վերջ,

—750 լիրա, ասաց նա ուրախութեամբ, ձեռքը ձեռքին խփելով:

—300-ը դատարանին. մնացածն իրանց, ասաց փաշան:

—Ճիշտ այդպէս, մէջ մտաւ Մուդդաի-Ումումին, հարիւրից աւելի արդէն օրէնքն է որոշագրում, հարիւրից աւելի տուգանք պէտք է վերցնել, նորից օրէնքի համաձայն:

—Ահա այդ նամակների շատերն էլ փուլ չունեն, իրանց թէզքէրէներն էլ կանոնաւոր չեն, մի քանիսինը մօտ զէ՛նք է բռնել, այդքան աժան ազատուելու համար թող գնան փադիշահին արեշտութեան համար աղօթք անեն, յարեց Միւսթանդըգը:

Բոկի դուռը բացվեց. հրացանը ձեռքին ներս մտաւ մի ոստիկան և մօտենալով ոստիկանապետ Խուրշիդին,… բերինք, չավուշ էֆենդի, ասաց նա:

—Բոլորը մէկից ներս բերէք, հրամայեց Միւթասարըֆը:

Ստուար թւով մի բազմութիւն իրար ետևից շարված՝ կարգով ներս մտան: Բոլոր նստողների էլ ուշադրութիւնը նրա՞ց վրայ դարձաւ: Պաշտօնեաների իւրաքանչիւրը սկսաւ առանձին-առանձին աչքի տակից անցկացնել նրանց, թէ որ մէկից դեռ կարող էր աւելի խողա պատառ պոկել:

Իր բազկաթոռի վրայ ծալապատիկ ունքվելով, քիթն ու մօուքն իրար խառնած և իր ձայնին սպառնական երանգ տալով, փաշան ոխերսաւ մի խօսք տալ "փէսատներին":

—Դուք շնորհակալ եղէք, ասաց նա, որ այժմ շղթաների տակ չէք գտնվում ձեր միւս մի քանի ընկերների նման, որո՛ք "գէօվլէթ խըյանէթիներ" են դարձել և "փէսատ բաշի" են ճանաչվում: Ձեր յանցանքներն էլ թէև ծանր են, բայց օրէնքը նրանց համար տրամադրում է դրամական տուգանք: Մենք երկար ժամանակ չէինք կարող ձեր գործերով զբաղվել, մանաւանդ այս շոգին, որ կարելի է արևի տաքութեամբ հալվել խաշել: Միևնոյն ժամանակ դուք պէտք է բարեբաղդ համարէք ձեզ, որ դատարանը, ի նկատի ունենալով ձեր յանցանքի թեթևութիւնը, արդէն իր վճիռը որոշեց կանխապէս: Դուք պէտք է տաք 300 լիրա տուգա՛նք նախ՝ ձեր առանց փուլի եղած սենեդների, երկրորդ՝ ձեր թէզքէրէների համար, երրորդ՝ այն զէ՛նքերի համար (մատնանիշ արեց նա մի քանի ռէվօլվէրների վրայ), մանաւանդ այս վերջիններիս համար մենք իրաւունք ունենք պահել ձեզ երկար, բայց դուք աղօթեցէք, որ արժանանում էք սուլթանի անսահման գթութեան և շնորհքին եւ այսպէս 300 լիրայով աժան էք պրծնում: Այժմ այդ փոխչաներից մի քանիսը փոխանցելով, կը յանձնէք դատարանին, իսկ սակի միւս մասի տեղ այդ լիրեղէնները կը թողնէք այստեղ: Ուրեմն հիմա ազատ էք, ասաց նա և յետոյ դառնալով Գէլի-Խուրշիդին — Սրանց կը տանես Նիւֆուս դայիրեսին և իրանց թէզքէրէները "դայդ" անելով, կը յանձնէք:

ԼՕՆԴՕՆ ,,ՀՆՉԱԿԻ" ՏՊԱՐԱՆ.

---

Ձերբակալվածների կողմից ոչ մէկ առարկութիւն չը լսվեցաւ: Նրանք առաջուց գիտէին թէ ինչ էր սպասում իրանց դատարանում, գիտէին նաև թէ ինչ վիճակի էին ենթարկվում համարձակախօսները. Նրանք եկել էին բանտի կողքից, զնդանի տակից, ուր սակայն տանջանքների և ծանր շղթաների տակ տանջվում էին իրանց ազգակիցները. միշտ անգամ շատերն ուրախ էին, որ "աժան ազատվեցան":

Ազատված բազմութիւնը դուրս ելաւ:

Սէրայի բակում ոստիկանապետ Խուրշիդը նրանց բաժանեց իրանց թէզքէրէները և այդ "բարիքի" համար նա մի-մի մէջիդ "բագշիշ" (վարձատրութիւն) ստացաւ իւրաքանչիւրից: Յետոյ նա հրամայեց, որ ամէնքը միասին "փադիշահըմ չօք եաշա" կանչեն: Ազատվածների բերանից դուրս պրծաւ սովորական աղօթքը, բայց թէ ինչ նպատակով էին կանչում այդ մեքենական բառերը, դա ինքը Ալլահը գիտէ…

*

Իրիկնադէմին, վերջալոյսի մեղմ օդի տակ, Եէշիլ-Ըրմաղի ափի մօտ, մի փոքրիկ մարգագետնի վրայ աչքի էին ընկնում մի խումբ պաշտօնեաներ: Նրանք բոլորվել էին մի սեղանի շուրջ և օղի էին խմում, ը ր գ օ լ ա ուտում, զանազան տեսակ սալաթների պնակները լզում, յղփանում և իրանց թէ՛ն քաղան փողոցային խաղերով սակայն աղմուկ բարձրացնում: Ոստիկանապետ Խուրշիդն էր նրանց ձախ սեղանով…

(կը շարունակվի) Վ.Ի.Թ.